

Հաճող փաշային հրամանատարութեան տակ գործող բանակը 1838-ին երկար ժամանակ պաշարեց նոյն բերդը: Երկարատեւ եւ խիզախ կռուներէն յետոյ, երբ տեսան, թէ անկարելի է կռուով գրաւել բերդը, ստիպուեցան բանակացութեան մտնել Սալիտ բէյին հետ: Թրքական հրամանատարութիւնը երկար բանակցութեան մը ընթացքին համոզեց քիւրդ բէյը, որ իրեն պաշտօն եւ ներում պիտի չնորհուի: Երկու կողմերն ալ սպիտակ դրօշակ պարզեցին: Սալիտ բէյը երկու հարիւր ձիաւորներով բերդէն դուրս եկաւ, ու լեբան բարձունքէն վար իջաւ թրքական հրամանատարական կեդրոնը:

Մուրդէ կը նկարագրէ թէ ի՞նչպէս Սալիտ բէյը, ազատ իշխանի մը համարձակութեամբ վար իջաւ իր ձիէն, մօտեցաւ Հաճող փաշային, համբուրեց անոր ձեռքը եւ առանց հրաւերի սպասելու՝ բազմեցաւ թրքական ընդհանուր հրամանատարի կողքը, որպէս ոչ պարտուած:

Բերդը այսպիսի խաբէութեամբ գրաւուելէն յետոյ, յաջորդ օրը Սալիտ բէյը տմարդօրէն սպաննուեցաւ թրքական հրամանատարութեան կարգադրութեամբ:

Բնական է, բազմաթիւ անգամներ կրկնուող նման դէպքերը աւելի ու աւելի կը մղէին քիւրդ ազգաբնակչութիւնը յամառելու իր կռուելի դիրքերուն մէջ, քան անձնատուր ըլլալու:

Քրդական ապստամբութիւնը մինչեւ վերջին շունչը դիմադրող յամառ կռիւներու շարք մըն էր: Այդ յամառութեան գեղեցիկ օրինակներէն մէկը կուտայ Մուրդէին իր գրքին մէջ (էջ 213). —

«1838-ի Խարզանի շրջանի մէջ տեղի ունեցած կռուի մը ընթացքին, մօտ 600 քրդեր ամբացած մնացին բլրակի մը վրայ, ու անոնք կռուեցան, մինչեւ որ իրենց վերջին զինուորն ալ սպաննուեցաւ: Կիներէն 50 հոգի ինքիւնքնին ժայռերէն վար նետեցին ջուրերուն մէջ եւ խեղդուեցան, չուզելով գերի իյնալ թրքական բանակին ձեռքը: Պատերազմական գործողութիւններէն յետոյ տեսնուեցաւ, որ սպաննուած հարիւրաւոր կիներու եւ մանուկներու վէրքերը թրքական զինուորներու սուլիի հարուածներէն առաջացած էին»:

* * *

Տիարբէքիի դաշտի, Խարզանի եւ ընդ-

հանրապէս հարաւային Սասունի հայերու մէկ մասը աշիրէթական կեանք ունէր եւ կապուած էր իր շրջանի քիւրդ աշիրէթապետին: Բնական է որ անոնք ալ զինուած մասնակցութիւն ունէին այդ կռիւներուն: Մուրդէն այդ մասին բան մը չի յիշատակեր: Սակայն, որոշակի կը խօսի քաղաքներու մէջ ամփոփուած հայերու եւ ռայեա հայերու տրամադրութեան մասին: Բացայայտ կ'երեւի որ այդ թուականներուն, հայութիւնը (բացի աշիրէթ հայերէ, օրինակ, Սասուն, Խարզան, Շատախ, Մոկս, Խնուսի մէկ մասը) թրքական կատալարութեան կողմը հակուած էր եւ ամէն կերպ կը բաղձար ձգտուած տեսնել քրդական աշիրէթապետութիւնները:

Այսպիսի քաղաքական հակումի մը արդիւնքը կարելի է նկատել Հաճող փաշայի այն ծրագիրը, որով կ'ուզէր թրքական բանակին մէջ առնել նաեւ հայ զինուորները: Ըստ Հաճող փաշայի ծրագրին, հայերը պիտի ցրուէին բանակին մէջ այն հաշուով, որ 20 զինուորներէն միայն մէկը հայ ըլլար, ուրեմն, միայն 5 առ հարիւր համեմատութեամբ:

Մուրդէն կը պատմէ իր նամակներուն մէջ թէ ինք դէմ արտայայտուած է Հաճող փաշայի ծրագրին եւ թելադրած է զինուորական հրամանատարին ընդունիլ իր առաջարկութիւնը: Ըստ Մուրդէի առաջարկին, իւրաքանչիւր գունդի չորրորդ գումարտակը (հազարեակը) պիտի կազմուէր հայերէ եւ ունենար իր հայ հազարապետը: Այսպիսով ռայեաները խարանէն ազատուելով, արժէքաւոր զինուորական տարր մը պիտի աւելցնէին թրքական բանակին վրայ:

Այս ծրագիրը առաջարկուած է 1839-ին, որ սակայն չէ գործադրուած Հաճող փաշայի կողմէ:

Զինուորական խնդրի առիթով Մուրդէն կ'արտայայտուի նաեւ հայերու մասին, որ նոյնութեամբ կ'ուզեմ հոս գետեղել որպէս հայոց այդ ժամանակուան օրինատախոնը մասնանշող կարեւոր վկայութիւն մը: —

«Ասիոյ հայերը կորովի եւ բազմաթիւ ցեղ մըն են, ընտելացած իշխանութեան, գործունակ են եւ անոնց մեծ մասը բարեկեցիկ կեանք մը ունի: Կը թուի թէ, այս վայրկեանիս ա-